

2026 Օգոստոս

**Հայաստանի օրենսդրական վերջին
փոփոխությունները՝ պատժամիջոցներ,
կրիպտոակտիվներ, ապրանքային
նշաններ, անշարժ գույք, հիփոթեք,
տվյալների պաշտպանություն և ավելին**

Հեղինակ՝ Անդերսեն թիմ

2026 AUGUST

Key Regulatory Developments in Armenia: Sanctions, Crypto-Assets, Trademarks, Real Estate, Mortgages, Data Protection & More

Prepared By: Andersen Team

Contact us: info@am.Andersen.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ / TABLE OF CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐԴՆՈՒՄ	2
NEW REQUIREMENTS FOR MANAGING INTERNATIONAL SANCTIONS CIRCUMVENTION RISKS ...	2
ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՅՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ	3
NEW REGULATIONS FOR CRYPTO-ASSET SERVICE PROVIDERS	3
ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	4
NEW OPPORTUNITIES FOR THE INTERNATIONAL PROTECTION OF TRADEMARKS	4
ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՅԿԱՅՈՒՄ ՏԵՍԱԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ	5
CONDUCTING PRELIMINARY COURT HEARINGS VIA VIDEOCONFERENCE	5
ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
NEW REGULATIONS ON THE USE OF ELECTRONIC MONEY	6
ՆՈՐ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՎԱՎԵՐԱՅՈՒՄ ԶՊԱՀԱՆՋՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ	7
NEW TEMPLATE FORMS OF AGREEMENTS NOT REQUIRING NOTARIZATION	7
ՀԵՏԱԴԱՐՁ ՀԻՓՈԹԵՔ ԵՎ ԿՈՂԱԿՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄ	8
INTRODUCTION OF REVERSE MORTGAGES AND SPOUSAL OWNERSHIP RIGHTS	8
ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	9
NEW REGULATORY AUTHORITY FOR PERSONAL DATA PROTECTION	9

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆՑՄԱՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐՂՆՈՒՄ

Օգոստոսի 11-ին ուժի մեջ են մտել Կենտրոնական բանկի կողմից ընդունված մի շարք նորմատիվ իրավական ակտերում կատարված փոփոխությունները, որոնցով միջազգային պատժամիջոցների (սանկցիոն ռեժիմների) հետ կապված ներքին հսկողության պահանջներ են սահմանվել հետևյալ ֆինանսական կազմակերպությունների համար. վճարահաշվարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, բանկեր, ներդրումային ընկերություններ, Կենտրոնական դեպոզիտարիա, ներդրումային ֆոնդերի կառավարիչներ:

Ներդրվող ռեժիմը գործում է առկա ՓԼ/ԱՖ համակարգին զուգահեռ և ընդգրկում է միջազգային կազմակերպությունների ու պետությունների կողմից կիրառվող տնտեսական, ֆինանսական և առևտրային սահմանափակող միջոցառումները՝ բացառությամբ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված ցանկերի:

Վերոնշյալ ցանկում թվարկված ֆինանսական կազմակերպությունները պետք է նշանակեն պատասխանատու անձ, ով պետք է լինի Կենտրոնական բանկում արդեն իսկ գրանցված ղեկավար, և մշակի պատժամիջոցների շրջանցման ռիսկի կառավարման մեթոդաբանությունը և ընթացակարգերը, առնվազն տարեկան պարբերականությամբ իրականացնեն ռիսկի գնահատում և կիսամյակային պարբերականությամբ ներկայացնեն հաշվետվություններ:

Ավելին՝

<https://www.cba.am/hy/Board-decisions/9539/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9561/>

<https://www.cba.am/hy/Chairman's-decisions/9557/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9537/>

NEW REQUIREMENTS FOR MANAGING INTERNATIONAL SANCTIONS CIRCUMVENTION RISKS

On August 11, amendments to a number of regulatory acts of the Central Bank came into force, which establish requirements to have internal control systems designed to manage international sanctions risks for Payment and Settlement Companies, Insurance Companies, Banks, Investment Companies, Central Depository, and Investment Fund Managers.

The new regime operates alongside the existing AML/CFT framework and covers economic, financial and trade restrictive measures applied by international organisations and states, excluding the lists established under the Law on Combating Money Laundering and Terrorism Financing.

The financial organizations listed above must appoint a responsible person who is already registered with the Central Bank as a manager, develop a methodology and procedures for managing sanctions-evasion risks, conduct a risk assessment at least annually, and submit reports on a semi-annual basis.

More:

<https://www.cba.am/hy/Board-decisions/9539/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9561/>

<https://www.cba.am/hy/Chairman's-decisions/9557/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9537/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9559/>
<https://www.cba.am/hy/Board-decisions/9541/>

<https://www.cba.am/hy/Board-decisions/9559/>
<https://www.cba.am/hy/Board-decisions/9541/>

ՆՈՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԿՐԻՊՏՈԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

NEW REGULATIONS FOR CRYPTO-ASSET SERVICE PROVIDERS

Կենտրոնական բանկը 2026 թվականի օգոստոսի 11-ին հանրային քննարկման է ներկայացրել «Կրիպտոակտիվների ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ կանոնները և պահանջները» կանոնակարգ 7/07-ը սահմանելու մասին խորհրդի որոշման նախագիծը:

On 11 August 2026 the Central Bank for public consultation a draft Board decision establishing Regulation 7/07 "Rules and requirements for the activities of crypto-asset service providers".

Այն մշակվել է «Կրիպտոակտիվների մասին» օրենքի հիման վրա և հասցեագրված է ՀՀ-ում գործող կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև ներդրումային ընկերություններին և բանկերին՝ նույն օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված ծառայությունների մասով:

It has been prepared on the basis of the Law on Crypto-assets and is addressed to crypto-asset service providers operating in Armenia, as well as to investment companies and banks in respect of the services covered by Article 18 of that Law.

Նախագծով սահմանվում են հաճախորդների հետ հարաբերությունների իրականացման, պայմանագրերի կնքման և տեղեկությունների տրամադրման վերաբերյալ կանոնները, հաճախորդների կրիպտոակտիվների ու դրամական միջոցների պահպանության պահանջները, ինչպես նաև առանձին ծառայությունների՝ առևտրային հարթակի գործարկման, պահառության, կրիպտոակտիվների փոխանցման, տեղաբաշխման, փաթեթի կառավարման և խորհրդատվության մատուցման կանոնները: Նախագիծը՝ [այստեղ](#):

The draft establishes rules governing customer relationships, the conclusion of agreements and the provision of information, requirements for the safekeeping of customers' crypto-assets and funds, as well as rules applicable to specific services, including the operation of trading platforms, custody, transfer and placement of crypto-assets, portfolio management, and the provision of advisory services. [The draft.](#)

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2026 թվականի հուլիսի 8-ին Սաուդյան Արաբիան, ՄՍՀԿ-ին փոխանցելով ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի արձանագրությանը միանալու վերաբերյալ փաստաթուղթը, դարձավ Մադրիդյան համակարգի 117-րդ անդամը:

Սաուդյան Արաբիայի համապատասխան հայտատուները և ապրանքային նշանների իրավատերերը կկարողանան օգտվել Մադրիդյան համակարգից՝ Մադրիդյան արձանագրության անդամ այլ երկրներում ապրանքային նշանի պաշտպանություն հայցելու նպատակով: Միաժամանակ, Արձանագրության անդամ այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի, հայտատուներն ու ապրանքային նշանների իրավատերերը կկարողանան իրենց միջազգային հայտերում նշել նաև Սաուդյան Արաբիան՝ որպես ապրանքային նշանի պաշտպանություն հայցվող երկիր:

Սաուդյան Արաբիայի՝ Մադրիդյան համակարգին միանալու համատեքստում կիրառելի են հետևյալ առանձնահատկությունները.

1. Սաուդյան Արաբիայի վերաբերյալ Ապրանքային նշանի գրանցման նախնական մերժման մասին ծանուցման ժամկետը 12 ամսվա փոխարեն կլինի 18 ամիս:
2. Կսահմանվի առանձին անհատական վճար, որը կվճարվի Սաուդյան Արաբիայում ապրանքային նշանի պաշտպանություն հայցելու դեպքում՝ ընդհանուր լրացուցիչ և փոխլրացնող վճարների փոխարեն:
3. Քանզի Սաուդյան Արաբիայում ապրանքային նշանի գրանցումը չի կարող բաժանվել կամ միավորվել՝ տվյալ երկրի մասով նման հայտեր առհասարակ չեն կարող ներկայացվել:

NEW OPPORTUNITIES FOR THE INTERNATIONAL PROTECTION OF TRADEMARKS

On July 8, 2026, Saudi Arabia became the 117th member of the Madrid System by depositing with WIPO its instrument of accession to the Protocol Relating to the Madrid Agreement Concerning the International Registration of Marks.

Eligible applicants and trademark owners from Saudi Arabia will be able to use the Madrid System to seek trademark protection in other countries that are members of the Madrid Protocol. At the same time, applicants and trademark owners from other Contracting Parties to the Protocol, including Armenia, will be able to designate Saudi Arabia in their international applications as a country in which trademark protection is sought.

In connection with Saudi Arabia's accession to the Madrid System, the following specific features will apply:

1. With respect to Saudi Arabia, the time limit for notifying a provisional refusal of trademark protection will be 18 months instead of the standard 12-month period.
3. A separate individual fee will apply when trademark protection is sought in Saudi Arabia, in place of the supplementary and complementary fees otherwise applicable under the Madrid System.
4. Since Saudi Arabian legislation does not provide for the division or merger of trademark registrations, requests for such division or merger in respect of Saudi Arabia may not be filed under the Madrid System.

Սաուդյան Արաբիայի վերաբերյալ Մադրիդյան արձանագրությունն ուժի մեջ կմտնի 2026 թվականի հոկտեմբերի 8-ին: Ավելին՝ [այստեղ](#):

The Madrid Protocol will enter into force with respect to Saudi Arabia on October 8, 2026. More [here](#).

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ ՏԵՍԱԿԱԴԻ ՄԻՋՈՑՈՎ

CONDUCTING PRELIMINARY COURT HEARINGS VIA VIDEOCONFERENCE

Արդարադատության նախարարությունից տեղեկացնում են, որ մշակվում է նախագիծ, որով առաջարկվում է էլեկտրոնային եղանակով վարվող քաղաքացիական և վարչական գործերով նախնական դատական նիստերն անցկացնել տեսակապի միջոցով:

The Ministry of Justice has announced that it is developing a draft law proposing that preliminary court hearings in civil and administrative cases conducted electronically be held via videoconference.

Նախագծի համաձայն՝ տեսակապի միջոցով անցկացվելիք նախնական դատական նիստերը կիրականացվեն արդեն իսկ գործող էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով:

Under the draft, preliminary court hearings held via videoconference will be conducted through the existing electronic judicial proceedings system.

Նախնական նիստերի անխափան անցկացումը ապահովելու նպատակով կմշակվեն նաև նիստերի անցկացման վերաբերյալ հատուկ կանոնակարգեր:

Special rules governing the conduct of preliminary hearings will also be developed to ensure that such hearings are conducted without interruption.

Մեր թիմը ձեզ կտեղեկացնի նախագծի վերաբերյալ հետագա զարգացումների մասին:

Our team will keep you informed of further developments regarding the draft.

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թվականի օգոստոսի 5-ից ուժի մեջ են մտել «Էլեկտրոնային փողի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողով գործառնությունների իրականացմանը ներկայացվող պահանջները» Կանոնակարգ 16.02-ում կատարված փոփոխությունները:

Կատարված փոփոխությունների համաձայն՝ էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվ (դրամապանակ) բացելու համար այլևս պարտադիր չէ ունենալ բանկային հաշիվ կամ վճարային քարտ: Միաժամանակ, էլեկտրոնային փողի հաշվառման հաշիվների (դրամապանակների) լիցքավորումը և էլեկտրոնային փողի մարումը հնարավոր է իրականացնել ինչպես անկանխիկ, այնպես էլ կանխիկ եղանակով:

Թողարկողի կողմից հաճախորդի նույնականացման և պատշաճ ուսումնասիրության ընթացակարգ սահմանելու, ինչպես նաև վճարային քարտի միջոցով նույնականացման առանձին ընթացակարգ նախատեսելու պահանջը այլևս չի կիրառվում:

Հաճախորդների ինքնության ստուգումը և նրանց վերաբերյալ անհրաժեշտ ուսումնասիրությունը կիրականացվեն գործող օրենսդրության պահանջներին համապատասխան, այդ թվում՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջների պահպանմամբ: Ավելին՝ [այստեղ](#):

NEW REGULATIONS ON THE USE OF ELECTRONIC MONEY

As of 5 August 2026, amendments to Regulation 16.02 “The Procedure and Conditions for the Issuance and Servicing (Circulation) of Electronic Money and Requirements for Transactions with Electronic Money” have entered into force.

Under the amendments, it is no longer mandatory to have a bank account or payment card in order to open an electronic money account (wallet). At the same time, electronic money accounts (wallets) may now be funded and electronic money can be redeemed both through cashless and cash transactions.

The requirement for the issuer to establish a separate procedure for customer identification and customer due diligence, as well as a separate identification procedure using a payment card, has been removed.

Customer identification and the necessary due diligence will be carried out in accordance with the requirements of applicable legislation, including the requirements set out under the Law of the Republic of Armenia on Combating Money Laundering and Terrorism Financing. More [here](#).

**ՆՈՐ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐ ՆՈՏԱՐԱԿԱՆ
ՎԱՎԵՐԱՑՈՒՄ ՉՊԱՀԱՆՋՈՂ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ**

Կառավարությունն ընդունել է որոշում «Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» որոշման մեջ լրացումներ կատարելու մասին, որով նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերի շրջանակն ընդլայնվել է:

Մասնավորապես, ավելացվել են հետևյալ օրինակելի ձևերը՝

1. բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության մասնակցությամբ անշարժ գույքի առուվաճառքի և հիփոթեքի խառը պայմանագրի,
2. բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության մասնակցությամբ կառուցվող անշարժ գույք գնելու իրավունքի և հիփոթեքի խառը պայմանագրի

Նշված փոփոխությամբ համապատասխան գործարքների համար նախատեսվում է նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի կնքման հնարավորություն՝ կողմերի կողմից համապատասխան օրինակելի ձևանմուշները էլեկտրոնային եղանակով ստորագրելու միջոցով:

Որոշումն ուժի մեջ կմտնի անշարժ գույքի պետական կադաստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգում համապատասխան գործիքակազմի տեղադրումից և գործարկումից հետո:

**NEW TEMPLATE FORMS OF AGREEMENTS NOT
REQUIRING NOTARIZATION**

The Government of the Republic of Armenia has adopted a decision amending the decision “On Approving the Model Forms of Agreements Not Requiring Notarization”, thereby expanding the scope of model forms of agreements that do not require notarization.

In particular, the following model forms have been introduced:

1. a mixed agreement for the sale and purchase of immovable property and mortgage, involving a bank or a credit organization authorized to provide mortgage loans; and
2. a mixed agreement for the purchase of the right to acquire immovable property under construction and mortgage, involving a bank or a credit organization authorized to provide mortgage loans.

The amendment provides for the possibility of entering into the relevant agreements without notarization by having the parties electronically sign the respective model forms.

The Decision will enter into force following the installation and launch of the relevant functionality within the electronic system of the official website of the State Committee of the Real Estate Cadastre.

ՀԵՏԱԴԱՐՁ ՀԻՓՈԹԵՔ ԵՎ ԿՈՂԱԿՑԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Հետադարձ հիփոթեքի ինստիտուտի ներդրմամբ պայմանավորված Ազգային ժողովի կողմից ընդունվել է քաղաքացիական օրենսգրքում և հարակից օրենքներում լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծը:

Ի տարբերություն սովորական հիփոթեքի՝ հետադարձ հիփոթեքի դեպքում կենսաթոշակային տարիքին հասած քաղաքացին կարող է իրեն պատկանող գույքը հիփոթեքով տրամադրել բանկին կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպությանը և դրա դիմաց ստանալ գույքի արժեքին համապատասխան գումար: Ընդ որում, քաղաքացին շարունակում է պահպանել գույքի նկատմամբ սեփականության և այն օգտագործելու իրավունքը:

Հետադարձ հիփոթեքի դեպքում վարկառուի՝ բանկի կամ հիփոթեքային վարկ տրամադրելու իրավասություն ունեցող վարկային կազմակերպության նկատմամբ պարտքը ենթակա է մարման, այն դեպքում, երբ վերջինս.

1. մահանում է,
2. օտարում է գույքը (այդ թվում՝ վաճառում է այն),
3. դադարում է բնակվել համապատասխան բնակարանում:

Բացի այդ, ներդրվում է իրավունքի նոր տեսակ՝ «կողակցի սեփականության իրավունք»: Այն հնարավորություն է տալիս ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքը գրանցել նաև որպես կողակցի սեփականություն:

Այս դեպքում ամուսիններից մեկի մահից հետո ողջ մնացած ամուսինը կարող է շարունակել ամբողջությամբ տնօրինել և օգտագործել բնակարանը կամ տունը՝ առանց այն մյուս ժառանգների հետ անհապաղ բաժանելու անհրաժեշտության: Ավելին՝ [այստեղ](#):

INTRODUCTION OF REVERSE MORTGAGES AND SPOUSAL OWNERSHIP RIGHTS

Due to the introduction of the reverse mortgage framework, the National assembly has adopted a draft law providing for amendments to the Civil Code and related legislation.

Unlike a conventional mortgage, under a reverse mortgage, a person who has reached retirement age may mortgage their property to a bank or a credit organization authorized to provide mortgage loans and receive an amount corresponding to the value of the property. At the same time, the person retains ownership of the property and the right to use it.

Under a reverse mortgage, the borrower's debt to the bank or credit organization authorized to provide mortgage loans becomes due for repayment when the borrower:

1. dies,
2. disposes of the property, including by selling it,
3. ceases to reside in the relevant apartment or house.

In addition, a new type of right “spousal ownership right” is being introduced. It allows property acquired during marriage to also be registered as the property of a spouse.

In such a case, following the death of one spouse, the surviving spouse may continue to fully possess, use, and dispose of the apartment or house without the need to immediately divide the property with the other heirs. More [here](#).

ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կառավարության նախաձեռնությամբ առաջարկվում է Անձնական տվյալների պաշտպանության գործակալության փոխարեն ձևավորել միջազգային չափանիշներին համապատասխանող անձնական տվյալների պաշտպանության ոլորտի նոր լիազոր մարմին (այսուհետ՝ «Լիազոր մարմին»):

Վերոգրյալի կապակցությամբ նախատեսվում է ընդունել ստեղծվելիք Լիազոր մարմնի վերաբերյալ նոր օրենք և սահմանել դրա կազմավորման, գործունեության և անկախության իրավական հիմքերը:

Մասնավորապես նախատեսվում է.

1. սահմանել, որ Լիազոր մարմինը լինելու է անկախ և չի գտնվելու որևէ գերատեսչության կազմում,
2. սահմանել Լիազոր մարմնի կազմավորման, անդամների նշանակման և լիազորությունների իրականացման կարգը,
3. ամրագրել Լիազոր մարմնի գործունեությունը ապահովող երաշխիքներ,
4. սահմանել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում ծառայությունը՝ որպես հանրային ծառայության առանձին տեսակ,
5. երաշխավորել Լիազոր մարմնի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական, նյութատեխնիկական և այլ ռեսուրսների առկայությունը:

Միաժամանակ, ներդրվում են անձնական տվյալների պաշտպանության ազդեցության գնահատման (DPIA) և անձնական տվյալների պաշտպանության պատասխանատուի (DPO) ինստիտուտների վերաբերյալ իրավական կարգավորումներ:

Լիազոր մարմինը վերահսկելու է անձնական տվյալների մշակման համապատասխանությունը

NEW REGULATORY AUTHORITY FOR PERSONAL DATA PROTECTION

At the initiative of the Government, it is proposed to establish a new competent authority for personal data protection (hereinafter, the “Competent Authority”), compliant with international standards, to replace the existing Personal Data Protection Agency.

In this connection, it is necessary to adopt a new law governing the Competent Authority to be established and to define the legal framework for its formation, operation and independence.

In particular, it is proposed to:

1. to provide that the Competent Authority will be independent and will not be part of any government agency or ministry.
2. establish the procedure for the formation of the Competent Authority, the appointment of its members and the exercise of their powers,
3. provide safeguards ensuring the proper functioning of the Competent Authority,
4. establish service in the field of personal data protection as a separate type of public service,
5. ensure the availability of the financial, material, technical and other resources necessary for the proper functioning of the Competent Authority.

At the same time, legal regulations are being introduced concerning the institutions of Data Protection Impact Assessment (DPIA) and the Data Protection Officer (DPO).

The Competent Authority will oversee compliance of personal data processing with the law and apply

օրենսդրությանը, օրենքով սահմանված administrative sanctions prescribed by law in cases of
պահանջների խախտման դեպքում կիրառելու է violations. More [here](#).
օրենքով սահմանված վարչական
պատասխանատվության միջոցներ: Ավելին՝
[այստեղ](#):